

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մղծաւանջ. Գանձակի կոտորածը. նոր հայ նահատակներ. հետաքրքրական զուգահեռութիւններ. զենեւալ Մալաման եւ հաշտարար պատգամաւորութիւն Գանձակում. Յուրքերը նախայարձակ. զեն. Յիւլիշէրի արդարամտութիւնը. Տակայշվիլու փախուստը. դարձեալ համայրներ. Յուրքերի արշաւանքը հայերի վերայ Թիֆլիսում. հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը. քաջերի հերոսական կալիւր Յուրքերի հետ. սօցիալ դէմօկրատները որպէս միջնորդ կուտղներ ժէջ եւ նոցա նահանջելը. Յուրքերի յարձակութիւնները երկաթուղու զծի եւ զաւառների վերայ. հայ եւ Յուրք պատգամաւորների խաղաղարար ժողով. եկեղեցու անգործութիւնը կոտորածի նկատմամբ. ս. Առաջնորդի ժողովարարութիւնը ի նպաստ կարօտեալների. Վեհի ժամանումը Տփլիս. Հայրապետի եւ Փոխարքայի փոխադարձ այցելութիւնները. Հին Ներսիսեան դպրոցի շէնքը կրակի եւ աւարի մատնուած. զինուորական դրութիւն. ընդհանուր քաղաքական գործադուլ. Թիֆլիսի կոնսիստորի ծառայողների գործադուլը:— Ներքին լուրեր:— Նամակներ կամագրութեան:

Գիտէս ինչ է մղձաւանջը, ընթերցող:— Տաժանելի երևոյթ է մղձաւանջը, հոգին ու մարմին ի միասին կաշկանդող մի սոսկալի տագնապ: Գիշերուան խաւարում քնած ժամանակէ քեզ թւում է թէ զարթուն ես. ուզում ես շարժուել՝ չես կարող, ընդարձացած են շղերդ, կաշկանդուած մարմնիդ անդամները. ուզում ես ձայն հանել, չես կարողանում. կարծես մի աներևոյթ հրէշ կոկորդէ սեղմել է, լեզուդ շղթայել: Սիրտդ պատռուում է այս քարացած դրութեան մէջ. դու քարացել ես հոգով ու մարմնով և գիտակցում ես այդ տագնապը: Մղձաւանջը տեսւմ է մէկ-երկու րոպէ, մինչև որ գիտակցութիւնդ պարզւում է, թափով շարժում ես մարմինդ, աներևոյթ հրէշը փախչում է, դու զգում ես թէ կեանքը դեռ չի խուսափել քեզնից: Ազատութեան շնչով վեր ու վար է դառնում սիրտդ: Հոգեբանական այս կարճատև մղձաւանջը միայն նման է պատմական այն մղձաւանջին, որին 8 երկար ու ձիգ օր ենթարկուած էինք մենք Տփլիսում, բայց նրա նման մաշող չէ, և ոչ նրա նման սոսկալի:

Քաղաւած եւ գուռ ու լուսամուտը փակ տնակիդ խուչ անկիւնը, քաղաքի բոլոր դռները փակ, կեանքը մեռած, իշխանութիւնն աներևոյթ. բարոյական այս խաւարի մէջ օր ու գիշեր հրաշէկ գնդակներ են որ սուրալով ճեղքում են օդն այս ու այն կողմ, սուր է որ շողում է, արիւն՝ որ հոսում: Տանդ մէջը կարկամած մնացել ես: Մղձաւանջն է սա, պատմական մղձաւանջ:

Այս անօրինակ երևոյթը Կովկասի Հայոց անմեղ ջարդն է, որ զօրեղ արձագանքով կրկնուեցաւ Տփլիսում, Կովկասի մայրաքաղաքում, փոխարքայի աչքի առաջ:

Տփլիսի կոտորածի կարմիր նշանը Գանձակը տուեց:

Տասն ամեայ Հայ-թրքական կոտորածների ժամանակ Գանձակի խաղաղութիւնը վրդովուած չէր և ոչ մի բանով. հայ ու թուրք թէև զինուած հեռաւոր արիւնհեղութեանց ազդեցութեամբ, բայց հաշտ էին և խաղաղ:

Ասպատակաւորների պատմութիւնից յայտնի է թէ Հոներն ու թաթարները, ուր իրենց ոտքն էին դնում, այնտեղ միայն փոշի էր բարձրանում նրանց ետևից:

Գանձակի տիրահոյակ գեներալ նահանգապետ Տակաշլիին որոնել ու պատմութեան մէջ միայն Հոների ու թաթարների դափնիներին է հաւանել: Սա ուր ոտք է դնում, այնտեղ հայկական կեանքը մեռնում է, սրա առաջից արիւն է հոսում, ետևից հրդէհն է լափում հայոց քաղաքներն ու թաղերը:

Շուշու կողմերն էր գեներալ Տակաշլիին. Զանգեզուրի հայոց գիւղերն ասպատակուեցան թրքաց ձեռքով: Մօտեցաւ քաղաքին՝ ոգևորութեան կրակը բորբոքեց Շուշու թուրքերին, իսկ հրդեհը հողին հաւասարեց պատմական Շուշին, Հայոց 400 ընտիր տներն իրենց բերք ու բարիքով: Տակաշլիին մի ժպիտ բեռելով Շուշու աւերակների վրայ, Գանձակ եկաւ:

Կար ժամանակ, երբ Պոռմէթէոսը իւր անձը տանջանքների մատնելով երկնքի աստուածներից կրակ ու լոյս փախցրեց, որ խաւար ու սառած մարդկութիւնը լոյս ու ջերմութիւն ունենայ: Գեներալ Տակաշլիին դժոխքի կրակներից է փախցրել կրակը, որ հայոց գիւղ ու քաղաքները հրդեհէ թուրքաց ձեռքով, ճիշտ այնպէս ինչպէս Նակաշիձէն Բագուում: Նա հասաւ Գանձակ. և խաղաղ Գանձակի վրայ թուրքերի գնդակների աւրափը տեղաց. կողոպտուեցան Հայոց եկեղեցու կալուածները, հայ ժողովրդի վաճառատները, բարձրացաւ հրդեհի ծուխը, այրուեց հայ ժողովրդի կալուածներն ու տները. հարիւրաւոր նոր հայ նահատակների արիւնով ցօղուեցաւ Անդրէկի պսակը: Երբ միայն Տակաշլիին էր զարդարել իւր ճակատը:

Ի դէպ, Զդիտենք մեր ազգայինները ուշադրութիւն դա՞-
րել են հետեւեալ հանգամանքների վրայ թէ ոչ. գններալ Տա-
կայշւիլին անփառունակ անմահացած իշխան Նակաշիձէի մօ-
տիկ աղգականն է: Կովկասի կառավարութիւնը երբ վերջնի-
մահից յետոյ առաջինն էր նշանակում գններալ նահանգապետ,
արդեօք չգիտէր այդ արեւակցութիւնը, թէ կուգէր երկու
վրէժ լուծել խեղճ հայ ժողովրդից, գառները գայլին պահ-
տալով:

Աւելի հետաքրքիր և խորին ուշադրութեան արժանի հան-
գամանք. Շուշու Հայոց այժմեան առաջնորդը բողոքել էր Տա-
կայշւիլու անարդար գործերի վրայ, Տակայշւիլին դրանից յե-
տոյ մօտեցաւ Շուշուն և... Շուշին բրիշակ դարձաւ:

Գանձակի, յաջորդը բողոքեց Տակայշւիլու վրայ,
բողոքը լրագրեւում հրատարակուեցաւ: Տակայշւիլին դրանից
յետոյ Գանձակ մտաւ և... Գանձակն էլ աւերակ դարձաւ:

Արդեօք իրերի այս դասաւորութիւնը պատահական զու-
գադիսութիւն է թէ...

Շարունակենք մեր խօսքը:

Փոստն ու հեռագիրը դադարած էին. Գանձակի ջարդը
պատմելու եկել էին ճանապարհներից Տփլիս փախած հայերը:
Հեռագիր ստացել էր միայն կառավարութիւնը: Հայերի խնդ-
րանօք Փոխաբքան խոստացել էր իւր օգնական գններալ Մա-
լաժային ղրկել Գանձակ կողոտածի առաջն առնելու համար:
Նոյն երեկոյ քաղաքի զանազան կուսակցութիւնների ժողովում
քաղաքագլխի նախագահութեամբ ընտրւում են մի խումբ մար-
դիկ զանազան աղգութիւններից, որոնք թուրք հոգևորականու-
թեան և ժողովրդի ներկայացուցիչների հետ պիտի գնային Գան-
ձակ հաշտութեան միսիան կատարելու:

Քաղաքագլուխն երեք հետևորդներով անձամբ դիմել էր
և Լուժայի աշխատակից Տ. Բենիկ վարդապետին, յայտնելով
որ ժողովի ընտրելիներից մէկն էլ նա է, ուստի խնդրում են
որ նա էլ գնայ: Մակայն վերջինս իւր զօրեղ պատճառաբա-
նութեամբ հրաժարուեցաւ գնալուց:

Տփլիսի հայտարար մարմինը գնեհրալ Մալաժայի հետ
20-ի դիշերը Գանձակ գնաց: Հետգհետէ ստացւող տեղեկու-
թիւնները հաստատեցին որ Գանձակում էլ նախայարձակ են
եղել թուրքերը, որոնք առաջին օրում մօտ 50 հայ են կո-
տորել: Դրսից եկած ու ներսում պատրաստուած թուրք հրո-
սակների առաջն առել է տեղական բերդապահ զնդի հրամանա-
տար՝ գնեհրալ Ֆլէյշէրը թուրքերի վրայ թնդանօթ բանալով:

Լումալ

Ֆլէյշէրի արդարամիտ և ազնիւ վերաբերմունքը աւելի ևս ամօթահար է արել գններալ Տակայշիլուն և մերկացրել նրա հոգին: Տակայշիլին նոյն օրուանից, ասում են, երկաթուղու գնացքով դէպի Բագու գնալով անյայտացել է: Ո՞ւր է նա, առ այժմ յայտնի չէ. թերևս դէպի Պետերբուրգ, Տրեպովից և Գոլիցինից իւր արդար վարձատրութիւնն ստանալու սև ու անարդար գործի համար:

Գանձակի գններալ նահանգապետ է նշանակուած Ֆլայշէրը:

Ոսկադարար խումբը հոգևորականութեան գլխաւորութեամբ շրջել է հայոց ութուրբաց թաղերը, նոյն խոստումներ, նոյն երդումներ, գուցէ նոյն համբոյրներն ու նոյն կոմեդիան, որով բազմիցս լրբացրին կիսավայրենի թուրքերին:

Ինչոր տասն ամիս շարունակ կատարում էր գաւառական քաղաքներում ու գիւղերում կովկասի կենդրոնական իշխանութեան աչքից հեռու, նոյնը կրկնուեցաւ նաև կովկասի մայրաքաղաքում, փոխարքայի աթոռանիստում:

Գանձակի կոտորածը Տփիսի ջարդի կանխանշանն եղաւ: Նոյեմբերի 22-ն էր, երեքշաբթի օրը, երբ մի քանի օր շարունակ տարածուող լուրերը, թէ հայերի գլխին գալիք կայ թուրքերից, արդարացան: Նախընթաց երեկոյեան կաթուղիական փողոցում ազգաւ ոչ հայ մի պատանի սպանում է մի պահակի (ГОРОДОВОЙ): Հաւարուած թոյնը հայերի գլխին թափելու առիթն ասում են այս սպանութիւնն է եղել: Զէ որ վրացին, ուսը, թուրքը, լեզգին, չերքէզը որևէ յանցանք եթէ գործի, տիրող նախապաշարուած հոգու առաջ յանցաւորը հայն է: Եւ ահա մոլեգնած թուրքն, ինչպէս դէի ձեռքում գործող խարաղան, յանդգնում է և Տփիսում պատուհասել հային:

Ամսի 22-ին յանկարծ թրքական թաղի գաղտնարաններից գնդակների տարափ է տեղում հարեան հայերի և նրանց տնեւրի վրայ:

Կառավարութեան և ոստիկանութեան կողմից՝ նոյն հերոսական սնսիրտ անտարբերութիւն, որպիսին միշտ արձանացել է գաւառներում հայ նահատակների կողքին:

Հայ ժողովուրդը միանգամայն անօգնական զգալով իրեն, ինքնապաշտպանութեան ոգով զինուեցաւ: Զէնք չունեցող հայր սրտի մոմուտով դռնէդուռ ընկած զէնք էր աղերսում, զէնք ունեցողն, ով ինչ ունէր, տանից դուրս գալով իւր տան առջև կազմ ու պատրաստ կեցած յարձակուող թուրք խուժանին էր սպասում գիշեր ու ցերեկ: Քաղաքի բոլոր թաղերը, բոլոր փո-

դոցները զինուած հայութեամբ էր զարդարուած: Ո՛վ կը համարձակուէր մթանը այդ փողոցներով անցնել, կառքով թէ հետիոտն, որ համարձակուէր չկանգնել և հաշիւ չտալ թէ ով է ինքը՝ հայ, ծպտեալ թուրք թէ խուլիգան, Երկշտաները սիրտ էին առել, քաջասիրտները հերոսութեան ծառաւել:

Այս վիճակն ընդհանուր էր հայկական բոլոր թաղերի համար. առաւել խիտ էին սահապանների շարքերը թրքական թաղերին կից փողոցներում:

Կոուլի դաշտը թրքական թաղն էր, մէյդան կոչուած մասը՝ Արիւնընոուշտ թաթարները շէնքերի մէջ յարմարագոյն դիրքերում ամրանալով՝ անողորմ կրակ էին տեղում հայոց մասի, հայ մարդկանց վրայ:

Սակայն անպարտելի է մեր «փողբրիկ ածուռ», մեր սիրելի հայ ազգը, երբ միութեան սէրն ու ինքնապաշտպանութեան հոգին է զարթնում նրա սրտում:

Թրքական հրազէնների առաջին ձայների հետ մէկտեղ, չդիտես թէ ուստի բուսաւ հայ քաջերի զինեալ գունդը: Գարնան պէս դալար, հրեշտակի պէս համարձակ, զեռի պէս ճարձակ զինեալ քաջերը սուրալով թռան Սուրյակի սարը: Սողունները մթին ձորակն են սիրում, արծիւները լեռների կատարը: «Իաշնակցութեան» հայ քաջերը արծուի թևերով սարի կատարէր թառեցան, աւերակ բերդի դիրքերը գրաւեցին: Նրանք խմբերի բաժանուելով լեռան կողերն ոտքի տակ տուին.

Ահա մի խումբ. նրանց առջև կանգնած է տասնապետը գլխակն աչքերին. դիտակն իջաւ աչքերից, նրա ցուցամատի ուղղութեամբ ինչպէս մի փողից որոտացին քաջերի հրացանները, Երկրորդ խումբը բերդի պարսպից, երրորդը ժայռերի տակից, չորրորդը կրճքի վրայ ընկած դարանած քաջերի հրացաններից... Ինչպէս հուր տեղացող երկինք նրանք շանթահայ էին անում ձորակը, ուր նենգ թաթարն էր ապաւինել:

Մէյդանի սահմանում, թուրք հրոսակների գրոհը զսպելու համար պարսպացած կեցած էին նոյն քաջերի ուրիշ ընկերներ, որոնց սլացող ֆնդակներն անշեղ ու շեշտակի խուժում էին դարանակալած թուրքերի տների լուսամուտներից, ներս էին քշում փողոցներում գլուխ ցցած յանդուգներին և կամ դիպած աւ գլուխում նրանց փողոցի մէջ:

Պատերազմողները միայն Տփլիսի թուրքերը չէին, դա չէզէոն էր, Ղազախ-Բորչալուից սողալով Տփլիս մտած արիւնաբերուք, հայի բերքն ու բարիքը կողոպտելու ելած գաւառացիք:

Ձարմանք, հատ հատ ճամբորդների մուտքն ի Տփլիս. միշտ նկատող ոստիկանութիւնը, չէ նկատել զինեալ ամբոխի մուտքը...

Երկժամեայ անհղ հրացանածգութիւնից յետոյ, լռեցին թուրքերը. հայ քաջերի որոտն էլ պատասխան չուներ, էլ թուրք չէր երևում, որին բարե տանէր հայ կտրիճի գնդակը: Պէտք էր խնայել փամփուշտ: Լռեցին և մերոնք: Կօշորի ճանապարհով դէպի սարն էին շտապում կառքեր. նրանց մէջ հայ օրիորդներ ու տիկիներն էին նստած. նրանք անօթցած քաջարի եղբարց հաց, ուտելիք ու քաջալերութիւն էին տանում:

Գիշերուան մութն իջաւ. էլ աչք չէր զօրում տեսնել զիրքերը, ուր պիտի հայ քաջերը մնային և գիշերները:

«Ապրիք հայ քաջեր, արեւշատութիւն ձեզ եղբայրներ», թուում է ինձ թէ Աւարայրի քաջաց արեան շիթերիցն էք ծլել դուք, մրմնջացիք, երանի թէ հայրենի հողից երբէք չկտրուէիք դուք» ու վիտարանից ցած իջնելով տէր բաբայի հետ փողոց իջանք շրջելու, մեր շուրջը քաջալերելու...

Տփլիսի կռիւը տևեց 8 օր, գիշեր ու ցերեկ, ընդհատուածներով: Կոռւին վերջ տալու համար (իբր թէ) կառավարութիւնը ձեռնպահ մնալով, իրաւունքը 500 զինեալ սօցեալ-դեմոկրատի յանձնեց, որոնք իբրեւ «չեզոք» տարր պիտի զսպէին յարձակւողներին: Նրանք հայերի և թուրքերի ընդհարման զիծը բռնեցին: Հայերը միջնորդ տարրի բարեմտութեանը հաւատ ընծայելով լռեցին: Արնխում թուրքերը շուտով արտայայտեցին իրենց ներքինը և այս անգամ հաշտարար զինեալ բանակի վերայ կրակ բացին, սօցեալ-դեմոկրատներից մէկին սպանելով և մի բանխին վիրաւորելով: Սոքա իրենց դերը վերջացած համարեցին. քաղուեցան, կառավարութիւնը իւր տուած զէնքերը յետ առաւ նրանցից: Զինուորականները որոնք տրտունջ էին բարձրացրել սօց.-դեմոկրատներին զէնք բաժանելու և քաղաքի պահպանութիւնը նրանց յանձնելու առթիւ, իրենց վրայ առան հայ-թրքական կռուին փերջ տալու խնդիրը: Կոռւի ութերորդ օրում պետական զօրքի մի վաշտ զիրքեր գրաւելով հայ քաջերի օգնութիւնը կրակ բաց արաւ թրքական որջերի վրայ, որտեղից նրանք գնդակ էին տեղում, և վերջ տուաւ:

Տփլիսի կռոււմ թուրքերը բազմաթիւ զոհեր տուին, հայերն անհամեմատ քիչ: Սակայն ինչպէս ամենուրեք, անտեսական մնասը հայինն էր և այստեղ. թուրքերը մի քանի Հայոց գործարաններ ու խանութներ այրեցին: Խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ հանդէս եկան նոյն ծիծաղելի «հաշտու-

թիւնները թրքաց և Հայոց մէջ, հոգեւոր և մարմնաւոր պարագլուխների ղեկավարութեամբ:

Մենք կարծում էինք թէ Տփլիսի հայ-թրքական ընդհարումը մի զօրեղ ու ակնյայտի փաստ կլինէր կառավարութեան և մեր հարևան ազգերի ձեռքում թուրքերի վարագութիւնն ու յանցաւորութիւնն ապացուցանելու համար: Բայց զարմանքը մեզ պատեց, երբ կարդացինք Կովկասի փոխարքայի նոսագիրը թագաւոր Կայսեր, որի մէջ Կոմսը ղեկուցանում է թէ. «բանուորական կուսակցութեան մի վկայութեամբ Տփլիսի կռիւն էլ հայերն են սկսել»:

Տփլիսի ընդհարումը արձագանք գտաւ անդրկովկասեան երկաթուղու ամբողջ գծի վրայ և գաւառներում: Բազուկից մինչև Սանահին թուրքերը յարձակումներ էին գործում կայարանների և վագոնների վրայ, դուրս կորզում անմեղ անաշտպան հայ ուղևորներին ու մորթոտում նրանց երկաթուղու վարչութեան, տեղական ժանդարմների և պահակների աչքի առաջ. ոչ ոք անմեղ նահատակներին չէր պաշտպանում, ոչ ոք զսպում թրքական վայրագ կատաղութիւնը:

Կարգ ու կանոն պահպանելու, ոճիրները տեղն ու տեղը պատժելու պարտաւոր այդ աստիճանաւորներն ու ղինուորները աւաւրկում էին կամ իրենք սակաւ են և վախենում են թուրքերին ընդիմանալ, կամ ղիմողներին պատասխանում էին «հրամայուած չէ մեզ ընդդիմանալ թուրքին կամ պաշտպանել հային»:

Տփլիսի և Գանձակի արնգոյն դէպքերից յետոյ գաւառների ղրութիւնն առաւել տագնապալից դարձաւ: Անշնան ընդհարումներով գիւղեր ու քաղաքներ աւերի ու կրակի են մատնւում: Ղեկտեմքերի վերջերին և յունուարի սկզբներին գաւառներից հասնող տեղեկութիւնները սրտածմլիկ և աղետարար են: Շուշին սովածահ է լինում, որովհետեւ Եւլախից ճանապարհը թրքաց ձեռքումն է, Գանձակի ու Շուշուայ գիւղերը տառապանքի դառնութեան վերջին կաթիլներն են ծծում: Շատ հայ գիւղերի մնացորդ բնակիչները իրենց տների-հրդեհուելուց լստոյ ցրուել են ուրիշ գիւղեր ու պատսպարան գտել, շատերը Տփլիս են եկել. եկել են նաև այնպիսի հայեր՝ այր թէ կին, ծեր թէ մանուկ, որոնք բռնի թրքացած են, որոնք մահից ազատուելու համար ուրացել են իրենց հաւատը քրիստոնեայ Ռուսաստանում և մահմեդական են դարձել: Այրւում ու աւերւում են Զազախի գիւղերը, Նուխու գիւղերը: Յունուարի սկզբում կարճատև խաղաղութիւնից յետոյ, ընդհարումներն սկսւում են Բազում, Երևանում, Շուշում և ուրիշ տեղեր: Հայոց

փորձութիան բաժակը լցնում են Պարսկաստանից հաղորդուող լուրերը: Լսում է թէ այնտեղ էլ թուրքերից զրգուլած պարսիկ ժողովուրդը սկսել է կողոպտել հային, աւերել նրա տունը, կոտորել նրան: Երանի թէ սուտ լինի, կոտորում են հայերին: Տաճկաստանում, կոտորում են Ռուսաստանում, կոտորում են գուցէ Պարսկաստանում: Էլ տեղ չկայ, էլ անկիւն չկայ, որ հայն ապաւինի, էլ արդարութիւն չկայ, որ փրկէ հային...

Այդ սոսկալի դրութեան մէջ եթէ մի յարաբերակա՜ն մխիթարութիւն կայ հայի համար, այդ այն է, որ հայ երիտասարդութիւնը ինքնապաշտպանութեան ոգով զինուած դիմադրում է թուրքին, լուծում է վրէժը. եթէ հայ ժողովուրդը մեռնում է, մեռնում է արիարար, թրքական գիւղերի աւերն ու կրակը, թրքական դիակները կոյտերը հանգչող աչքերի վերջին տեսարանն են լինում, գուցէ և քաղցրացնում են մի փոքր մահացողի հոգեվարքը. միակ սուրբ ինքնախարութիւն որ կարող է մխիթարութիւն համարուել քաջաբար ընկնող և անմեղ մահացող հայի համար:

Բայց ո՛ւր կը տանի մեզ այս դրութիւնը. ի՞նչ շահ ունի այս անմիտ կոտորածից հայը կամ թուրքը. ոչ մի շահ, ոչ մի արդիւնք: Երկու ազգին էլ սպասում է դառնագոյն կացութիւն, տանջող զղջումն, իսկ երկուսի վրայ թշնամու դիւական ծիծաղը պիտի լսուի:

Կառավարութիւնը որոշած է հայ և թուրք ներկայացուցիչներից մի ժողով կազմել և իւր ղեկավարութեամբ կոտորածները դադարեցնելու հնարներ ծրագրել: Երկու ազգութիւններից այդ ժողովի համար պատգամաւորներ են ընտրւում երկար ու բարակ, իսկ կոտորածը շարունակւում է մէկ այս մէկ այն տեղում:

Ազգային աղէտների ժամանակ Հայոց ժողովրդական եկեղեցին միշտ իւր բարձրութեան վրայ կանգնելով հերոսական ջանքերով պաշտպանել է ազգը, փրկելով նրան ոչնչացումից: Այս ճշմարտութիւնը մեր ազգային պատմութեան վաւերական կնիքն է:

Բայց վերջին աղէտալի օրերում, ամաչելով պիտի ասենք, որ մեր եկեղեցին իւր պարտքը պատշաճաւոր չափով չկատարեց: Տփլիսը Կովկասի ազգերի մտաւոր կենդրոնն է. թէ կառավարչական թէ զանազան ազգային խնդիրների լուծումն և ուղղութիւն տալը Տփլիսից է կախուած: Մինչդեռ հենց այստեղ մեր եկեղեցին իւր ամբողջ հոգևորականութեամբ ոչ մի դրական ջանք գործ չէրեց ժողովրդին աղէտից ազատելու կամ

գոնէ յուսարեկներին քաջալերելու, իշխանութեան առաջ դօրեղ միջնորդութիւններ անելու և այլն: Խօսքի և գործի ազատութեան այս պատմական մոմենտին, երբ ամենայն կուսակցութիւն ազատ ու բացօդեայ իւր քարոզն էր կարողում, իւր ճառն էր ճառում, իւր գործն էր կազմակերպում, միայն լուռ մնաց Հայոց եկեղեցին, որ կոչուով քարոզող պիտի լինի: Մի խօսք, մի քարոզ չլսեց ժողովուրդը եկեղեցու բեմից քաջալերական, մխիթարական, սխալանքներից զգուշացնող և այլն: Այս վարմունքը մեր եկեղեցու ոգուն ու անցեալին հակառակ է:

Անցեալ տարի մի քաղաքագլուխ, մի քաջարի վերմիշեան իւր ազդու միջամտութեամբ դրեթէ Կովկասի հայ-թրքական ընդհարումների վրայ ղօրեղապէս ազդեց: Նոյնը և աւելին կարող էր անել Տփլիսի հոգևոր իշխանութիւնը, որ կամ անտարբերութիւնից կամ անկարողութիւնից լուռ, անգործ մնաց և եկեղեցին էլ համր, անկենդան մի հաստատութիւն դառնալով նսեմացաւ ժողովրդի աչքում:

Մեր Հոգևոր իշխանութիւնը դեռ «սուտ էր» համարում երբ կանխօրէն տեղեկացնում էին թէ թուրքերը վճռել են շարդել հայերին: Իսկ երբ այդ «սուտ»ը կարմիր իրականութեան փոխուեցաւ, այն ժամանակ միայն մեր պետերն սկսան նոյն ծիծաղելի համբոյրները մօլլաների հետ, նոյն «խաղաղութիւն ամենեցուն»ը փողոցներում, որ մենք միշտ դատապարտել ենք:

Կոտորածների ժամանակ և յետոյ ս. Թեմակալը ժողովրդի կենդանի մնացած մասի համար յիրաւի առատօրէն փող է հաւաքել բաժանելու նպատակով, շարունակ «ողորմեցարութեան» հայցելով: Ո՞վ ինչ է ասում, շատ լաւ բան է փող հաւաքելը աղքատներին խնամելը. բայց աւելի լաւ՝ աղքատութեան ու կոտորածի առաջն առնելու վրայ քրտնելը կլինէր:

Ի դէպ. եկեղեցու դիրքը բարձր պահելու համար, մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է մանրամասն հաշիւ ներկայացնել հասարակութեան թէ հաւաքած գումարների և թէ նրանց գործադրութեան վերաբերութեամբ որ ժողովրդի վստահութիւնը դէպի եկեղեցականի «ողորմեցարութեան» չկորչի: Զք թիւնը դէպի եկեղեցականի կան, որոնք տակաւին որ դժբաղդաբար շատ շատ հաշիւներ կան, որոնք տակաւին ոչ պարզուած ու ոչ տրուած են:

Տփլիսի կոտորածների ժամանակն էր գրեթէ երբ ազգիս ծերունազարդ հայրապետը Տփլիս ժամանեց:

Փոխաբայութիւնը վայելուչ ընդունելութեամբ պատուեց վեհին: Վեհի ցանկութիւնը լսելով կոմս փոխարքան թէ նա

կամենում է այցելութեան գնալ, ինքը թոյլ չէր տուել որ Հայրապետն անհանգիստ լինի, նա ինքն անձամբ այցելութեան էր եկել Նորին Ս. Օծութեան: Նոր տարուայ օրը վեհափառ կաթողիկոսը շնորհակալական այցելութիւն տուեց Տէր փոխարքային. իսկ ծննդեան օրը վեհափառ Հայրապետին շնորհաւորելու եկել էին կոմսուհի վարանցով-Դաշկովան ուղեկցութեամբ փոխարքայի օգնական գնեւերալ Մալամայի, երկրորդ օգնական Սուլթան-Կրիմ Գիրէյի, շտաբի պլխաւոր Զրեազնովի, Տփխիսի գնեւերալ-նահանգապետ Ալիխանով-Աւարսկու, Տփխիսի նահանգապետի և այլոց: Սիրալիբ ընդունելութեան և հաճելի խօսակցութեան մէջ նշանակալից են Աւարսկու խօսքերը, որոնցով նա վստահացրել է թէ ինքը իւր նոր գործունէութեամբ պիտի ցոյց տայ, որ ինքը հայատեաց կամ հայ հալածող չէ, որպիսի լուրեր կան իւր մասին:

Կոմս Փոխարքան հիւանդութեան պատճառով անկարող է եղել անձամբ պատուել վեհին:

Վեհափառ կաթողիկոսի Տփխիսում եղած ժամանակ մի ուրիշ յոյժ ցաւալի դէպք պատահեց: Դեկտեմբերի 22 ին Ներսէս Ե. կաթողիկոսի ձեռքով շինուած դպրանոցի մօտերքում մի ումբ են ձգում: Ի պատասխանի այդ ումբին կողակները կրակի մատնեցին ամբողջ շինութիւնը, կոտորեցին վարի յարկի խանութներում եղած շատ անմեղ մարդկանց, մեծ մասով հայեր: Շէնքը մի ամբողջ թաղ—կլարտալ էր բռնում, որի մէջ առևտուր անողները գրեթէ բոլորը հայեր էին: Գոյքի մի մասը տէրերից ոմանց հետ մոխրացաւ, միւս մասը կողոպտուեցաւ. շէնքը բոլորովին այրուեց և ոչ մի վործ չեղաւ կրակը հանգցնելու: Դպրանոցի և վաճառականների ֆլաւը մօտ մէկ և կէս միլիօնի է հասնում:

Դրանից մի քանի օր առաջ զինուորական դրութիւնը կրկին հրատարակուեցաւ Տփխիսում:

Հայ-թրքական կոտորածները չեն միայն, որ հայ ազգի վրայ իբրև պատուհաս ծանրացան: Ռուսաստանի ընդհանուր գործադուլը իւր բոլոր մանրամասնութեամբ կովկաս մտաւ. ուր աւելի տեական կերպարանք ստացաւ: Դադարեց երկաթուղային երթևեկութիւնը, կանգ առան գործարանները, փակուեցան խանութներն ու առևտրական տները, ընդհատուեցաւ ուսումը բոլոր վարժարաններում, լռեց հեռագիր ու հեռախօսը, դադարեցան լրագիրներն և այլն: Մէկ խօսքով գործունէութիւնն ու կեանքը անօրինակ կերպով մեռաւ, մարդկանց համար մնաց միայն սարսափն ու անորոշութիւնը:

Այսպիսի պարագայի մէջ բնական էր, որ երկրի տնտեսական դրութիւնն ընկնէր: Ունեւորներն իրենց տնտեսածն սկսան վայելել, աղքատները մաշող զրկանքների ենթարկուեցան, օրապահիկով ապրողները քաղցած մնացին, Տփլիս քաղաքում եղած մթերքներն սպառեցան, զները բարձրացան: Մպաւեցաւ նափտը, մոմը, շաքարը, որոնք ձեռք չէին ընկնում նոյն հարուստների համար: Հաց ճարելու համար ժամերով պէտք էր կանգնել հացավաճառների դրանք, ընդհարուել խնունդում բաղմութեան հետ:

Տնտեսական շիւսար այս գործադուլի ժամանակ ամենից աւելի հայ ժողովրդի վրայ ազդեց շատ հասկանալի պատճառներով:

Ի թիւս այլ հաստատութեանց ծառայողների, անակնկալ կերպով գործադուլ արին և Տփլիսի Հայոց կոնսիստորիայի ծառայողները, բուռն կերպով պահանջելով, որ իրենց խղճուկ դրութիւնը բարւոքուի: «Անակնկալ» ենք ասում, որովհետեւ չէինք հաւատում թէ կոնսիստորի հինաւորաց տրագիցիով ճակատագրական հլութեան վարժ ծառայողը համարձակուէր պահանջ անել: Սակայն փաստը կար: Ծառայողների պահանջները նոյնքան արդար էին, որքան չափաւոր: Նրանք ոռճիկներէ յաւելումն էին պահանջում: «Երեսուն երեք տարի առաջ, ասում էր աստիճանաւորներից մինը, ճիշտ այն ժամանակ սկսեցի իմ ծառայութիւնը կոնսիստորում, երբ այժմեան ս. առաջնորդը դեռ սարկաւագ էր. 33 տարի յետոյ իմ ամսական ոռճիկս միայն 30 ոռբլի է. ի՞նչպէս պահեմ ես ընտանիքս, երբ մանաւանդ ուրիշ ապագայ չունիմ այլ ևս»: Ծառայողներից ոմանք ստանում էին 18 ոռբլի, ընտանիքի, զաւակների տէր մարդիկ:

Ծառայողների գործադուլը խստութիւնների և վիրաւորանքների հանդիպեցաւ կոնսիստորիայի կողմից. նոյն իսկ արձակումով սպառնացին: Բայց երբ ծառայողները սպառնական դիրքով հանդէս եկան լրագրութեան մէջ, կոնսիստորիան փութաց գոհացնել. նրանց, այս անգամ խոհեմութիւնը գերադասելով բիւրօկրատիական իրաւունքներից:

Ուրախ ենք որ կոնսիստորի ծառայողների դրութիւնը փոքր ինչ բարւոքուեցաւ նիւթապէս և բարոյապէս: